ների դար պէտք է կոչուի։ Միւս կողմից սակայն վերագրել այդ ամենը հրաշքների անշուշտ պէտք չէ.—փոքրիկ երաժշտագէտների ֆենոմենալ խնդրում ամենանպաստաւոր դերը կատարել է նրանց երաժշտական շրջապատը։ Մեր մէջ է միայն, որ երաժշտական արուեստը վերին աստիճան աննախանձելի դրութիւն ունի, և երաժշտական զարգացում ստացածները ներկայանում են, որպէս բացառիկ երևոյթներ, մանաւանդ հայկական իրականութեան համար։

Ընդունելով երկու մանուկ երաժշտագէտների երևան գալը, որպէս բացառիկ երևոյթ, աւելորդ չեմ համարում կցել, որ աչքի ընկնող ընդունակութիւններով օժտուած մանուկներ մենք էլ անշուշտ շատ կունենանք, եթէ մեր ծնողներն այդ ընդունակութիւնները զարգացնելու համար և որևէ հնարաւորութիւն կամ նպաստաւոր հանգամանք ստեղծէին։

Minor

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴ

Նորին Սրբութեան Վեհափառ Կաթուղիկոսի հրամանով «Արարատ»ի սոյն համարում զետեղելով Դպրոցական Ֆոնդի համար մինչև ներկայ թուի Փետրուարի 7-ը ստացուած գումարների հաշիւը, կարևոր ենք համարում համառօտակի այստեղ առաջ բերել Հայոց տառերի գիւտի 1500 ամեայ և հայ տպագրութեան 400 ամեայ Ազգային Մեծ Յոբելեանի շուրջը եղած կարգադրութեանց մասին։

Պատմական այս Մեծ Յոբելեանն անշուշտ անհրաժեշտ էր ընդմիշտ յաւերժացնել ազգօգուտ մի մեծ գործով։ Հայ ժողովուրդն ունի կարիքների մեծ ծով. սակայն այդ կարիքներից ամենաանհրաժեշտն և Ազգիս Վեհափառ Հայրապետի սրտին ամենից մօտ՝ ամենից ցանկալին անշուշտ Իւր ժողովրդի լուսաւորութեան գործն է՝ միջոց տալ օգտուելու հայ ժողովրդի հազարաւոր ուսումնազուրկ մանուկներին գրի ու տպագրութեան փրկարար բարիքներից։ Եթէ 1500 տարի առաջ Ս. Սահակ ու Ս. Մեսրոպ տուին հայ ժողովրդին գիր, գրականութիւն ու դպրոց, իսկ Ս. Գրքի թարգմանութեամբն էլ հնարաւորութիւն տուին օգտուելու քրիստոնէական լուսոյ աղբիւրից և լուսաւորելու իրենց սիրտն՝ ու միտքը՝ բնականաբար Ազգիս Վեհափառ Կա-

թուղիկոսն էլ նոյն սուրբ գործի շարունակողը պէտք է լինէր։

Եւ յիրաւի Վեհափառ Հայրապետն ի նկատի ունենալով՝ որ թէև հայ գրի գիւտից անցել է 1500 տարի և առաջին հայ գրքի տպագրութիւնից 400 տարի՝ բայց դեռ բախտաբար մինչև այժմ այդ բարիքներից օգտւում են միմիայն բախտաւոր մանուկները, իսկ հազարաւոր մանուկներ մնում են զուրկ և խարխափում տգիտութեան մէջ։

Ահա և այդ հազարաւոր մանուկների ուսման հոգսը դրդեց Նորին Սրբութիւն Տ. Տ. Գէորգ Ե. Կաթուղիկոսին Ազգային այդ Մեծ Յոբելեանը յաւերժացնել մի մնայուն գեղեցիկ յուշարձանով—հիմնել Դպրոցական ֆոնդ, ըստ ասութեան Վեհափառի «Մեսրոպեան լումայ» որի տոկոսիքներով նպաստել մեր եկեղեցական ծխական դպրոցների բազմացման ու բարգաւաճման սուրբ գործին, մասնակից անելով գիւղական խուլ անկիւնների հայութեան ևս գրագիտութեան և ուսման։

Դպրոցական ֆոնդի գեղեցիկ գործը հաստատելով 1912 թ. Մայիսի 7-ի կոնդակով՝ հրամայում կենդրոնական Յանձնաժողովին և բոլոր Առաջնորդներին տօնել Ազգային Մեծ Յոբելեանը՝ նոյն 1912 թ. Հոկտեմբերի 13-ին։ Իսկ յետոյ, ինչպէս գիտենք, կարգադրութիւն եղաւ 1912 թ. Հոկտ. 13-ից մինչև 1913 թ. Հոկտ. 13-ը համարել Յոբելենական տարի։ Վեհափառ Հայրապետն 10 Սեպտեմբ. 1912 թ. դիմեց Կովկասի Տ. Փոխարքային թոյլտուութիւն ստանալու այդ Յոբելենական տարուայ ընթացքում ժողովարարութիւն անելու Փոխարքայութեան սահմաններում յօգուտ Դպրոցական ֆոնդի, իսկ Ռուսաստանի հայաբնակ քաղաքներում ժողովարարութիւն անելու համար դիմեց ներքին գործոց Տ. Նախարարին։ Թէ ներքին գործոց Տ. Նախարարը և թէ Կովկասի Տ. Փոխարքան սիրով յարգեցին Վեհափառ Կաթուղիկոսի միջնորդութիւնը՝ թոյլ տալու յօգուտ Դպրոցական ֆոնդի ժողովարարութիւն անելու։

Վեհափառ Հայրապետը պատշաճ իշխանութիւններից թոյլտուութիւն ստանալուց յետոյ կոնդակով պատուիրում է ս. Էջմիածնի Սինոդին Դպրոցական ֆոնդի կանոնաւոր ժողովարարութեան համար անել հարկաւոր կարգադրութիւններ

Ռուսաստանի Հայոց բոլոր թեմերում և «...պատուիրել առաքել զամենայն դրամս ի Սինոդդ առ ի պահել ի գանձարանի Մայր Աթոռոյս ընդ իրաւասութեամբ Ծայրագոյն Պատրիարքի և Կաթուղիկոսի ամենայն Հայոց ընդ հաշուեւութեամբ Սինոդի ս. Էջմիածնի, և երրորդ տալ տպագրել պարբերաբար զտացեալ նուէրս յԱրարատ ամսագրի։ Իսկ վասն գործադրելոյ զտոկոսիս Դպրոցական դրամագլխոյ ունիմք նշանակել զառանձին յանձնաժողով առ յապայն»։

Բացի զորանից Վեհափառ Հայրապետն առանձին առանձին կոնդակով պատուիրում է բոլոր Ռուսահայոց թեմերի Առաջնորդներին և յորդորում ամեն կերպ նպաստել Դպրոցական ֆոնդի յաջողութեան, որ կարելի լինի ժողովել այնպիսի մի պատկառելի գումար, որի տոկոսիքներով հնարաւոր լինի պահպանել այն բոլոր եկեղեցական-ծխական դպրոցները, որոնք զուրկ են միջոցներից։ Այդ առթիւ Վեհափառ Հայրապետն Առաջնորդներին ուղղած այդ շրջաբերական կոնդակի մէջ յայտարարում է հետեւեալ ուշագրաւ հայրական խօսքերը. «...Քաջայայտ է գերապատուութեան Ձերում, որպէս և սիրելի ժողովրդեանս, զի եկեղեցական-ծխական դպրոցք մեր կան տնտեսապէս յանմխիթար վիճակի, ուստի անհրաժեշտ է առանց յապաղման ապահովել զգոյութիւն չքաւոր դպրոցաց մերոց, բանալ գնորս յայնոսիկ գիւղօրայս, հասարակութիւնք որոց ի խաւարի կան և ի տգիտութեան, զրկեալ իսպառ ի փրկարար լուսոյ քաղաքակրթութեան։ Առ ի դարմանել և բուժել զմահաբեր վէրս տգիտութեան հայ ժողովրդեան մերոյ սիրելւոյ և առ ի բազմացուցանել զազգային կրթարանս, որք են գլխաւոր աղդակք զարգացման մայրենի լեզուի և գրականութեան և միանդամայն գոյութեան ազգիս, այսու Հայրապետական Կոնդակաւ Մերով պատուէր տամք Գերապատուութեանդ՝ փութով կազմակերպել ընդ նախագահութեամբ Ձերով ի ձեռնհաս և ի հեղինակաւոր անձանց զթեմական Յանձնաժողով և ամենայն եռանդեամբ սկիզբն առնել ժողովարարութեան յամենայն քաղաքս և ի գեօղս թեմիդ ի ձեռն տեղական մատնախմբից։ Զնուէրս տալ արձանագրել վա-

նոնաւորութեամբ ի տումարս և ի ցուցակս, յղեալս առ ձեզ ի Սինոդէ ս. Էջմիածնի և զամենայն ժողովեալ դրամս առաքել ի նոյն Սինոդն։

Բարոյական և ազգային պարտիք են ամենայն դիտակից անձանց, եկեղեցական–ծխական հոգաբարձութեանց և ուսուցչական մարմնոց դպրոցաց մերոց՝ լինել աջակից և նպաստող և աշխատել ամենայն արիաջանութեամբ վասն յաջողութեան դպրոցական դրամագլխոյ (ֆոնդի)։

Լիայոյս եմք, զի ամենեքեան, որք ըմբռնեն զօգուտն և զշահն եկեղեցական–ծխական դպրոցաց մերոց և գործեն վասն մտաւոր–բարոյական յառաջադիմութեան ազգիս, օժանդակեսցեն ազգօգուտ ձեռնարկութեանս այսմիկ ի յաւերժացումն Մեծի Յոբելեանի»։

Վեհափառ Հայրապետի բարեհաճ տնօրինութեամբ եղած Ազգային Մեծ Յոբելեանն յաւերժացնող «Դպրոցական ֆոնդ»ի գեղեցիկ ձեռնարկութեան հետզհետէ արձագանք տուին հայութեան զանազան վայրերից և ուղարկեցին իրենց լման յօգուտ Դպրոցական ֆոնդի։ Առաջին օրինակը տուեց Վեհափառ Հայրապետն՝ որ բարեհաճեց կարգադրել Մայր Աթոռի գանձարանից տալ յօգուտ Դպրոցական ֆոնդի 15 հազար ռուբլի։ Մինչև ներկայ թուի Փետրվարի 7-ը ստացուած է Սինոդում յօգուտ Դպրոցական ֆոնդի արժէթղթերով և կանխիկ դրամով մի հարիւր եօթ հազար երեք հարիւր վաթսուն և ինն ռուբլի 82 կոպ.*) (107,369 ռ. 82 կոպ.) որպիսի գումարը գրուած է Երևանի դրամական հաստատութիւններում ի պահ և ի շահեցողութիւն։ Այդ

*) Այստեղ պէտք է նկատենք, որ թերթերի և հեռագրական գործակալութեան հաղորդած լուրը՝ թէ Բեսսարիայի Առաջնորդ Տ. Ներսէս արքեպիսկոպոսն նուիրել է յօգուտ Դպրոցական ֆոնդի մի հարիւր հազար ռուբլի՝ գլխովին սխալ է, որի առթիւ ինքը Տ. Ներսէս արքեպիսկոպոսն Վեհափառի Դիւանին իւր 3 Փետրվարի № 38 գրութեամբ հաղորդում է. «Ի պատասխան Դիւանիդ 22 Յունվարի տարւոյս թիւ 145 գրութեան, սորանով յայտնում ինք, որ հեռագրական գործակալութեան հաղորդագրութիւնը միանգամայն սխալ է և անհիմն . . . ։ Նոյն սխալ լուրը վերջերս հերքուեցաւ տեղական թերթերում»։

գումարից 22500 ռուբլի տոկոսաբեր թղթեր են, (որից 15 հազարն է Մայր Աթոռինը), իսկ մնացած 84869 ռ. 82 կ. կանխիկ գրամ։ Ստորև բերում ենք վերոյիշեալ 107,369 ռ. 82 կոպ. գումարի մանրամասն հաշիւը։

Ցուսով ենք, որ այն ճշմարիտ հայը, որ մինչև այժմ իւր սրբազան պարտքը չէ կատարել և զլացել է իւր ունեցածից բաժին հանել յօգուտ Դպրոցական ֆօնդի, անշուշտ նա կըշտապի ամենայն նախանձախնդրութեամբ ցոյց տալ, որ գիտէ հայութեան սիրելի այս մեծ գործին իւրովանն մասնակից լինել։ Մնացած նուիրատուների ցուցակը հետզհետէ կըտպագրենք։ Բաբգէն վարդապետ

ՀԱՇԻՒ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴԻ

	Ռ.	Կ.
1. Նորին Վեհափառութեան հրամանով Մայր Աթոռի գանձարանից արժէթղթերով . . .	15000	—
2. Բաղա գիւղի Մեսրոպ քահ. Ստեփաննոսեանից	15	—
3. Բժշկապետ Վ. Արծրունու միջոցով Կիսլովոդսկում մի խումբ Բաղուեցիներից հանգանակած .	100	—
4. Նուխեցի Բէհրութ-բէկ Մելիք-Ալլահվերդեանից՝ Նուխում կազմակերպած ներկայացումից .	35	73
5. Լոռուայ գործակալ Մկրտիչ քահ. Տէր-Մովսիսեանից № 2364 հանգանակութեան թերթով .	10	—
6. Ռոստովի Հայոց Իրմիրեան Բ. Ընկերութիւնից	25	—
7. Ախալքալակի դպրոցական ֆօնդի Ցանձնաժողովից № 2001 հանգանակութեան թերթով . .	30	25
8. Տփխիսի քահանաների ապահովութեան գանձարանից	200	—
9. Դանձակի վիճակի Եփրեմ քահ. Մելիք-Առստամեանի միջոցով ժողովուած № 2235 հանգան. թերթով	30	50
10. Աստրախանի թեմի Տինդինկա գիւղի հայ ժողովր.	4	30
11. Ախալցխայի փոխանորդից՝ հանգուցեալ Վահան Ա-ղաջանեանի ժառանգների նուիրած . .	200	—
12. Դանձակի փոխանորդից՝ հանգանակուած Գառնա-կեր և Գետաբեկի մօտ գիւղերից № 2236 և 2237 թերթերով	43	15
13. Աստրախանցի առևտրական Յովհաննէս Գրիգորեան		